ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան «15» դեկտեմբերի 2022 թ.

ՀՐԱՄԱՆ N 443-Ա

2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՏՈՒ՝ ՀԱՍՄԻԿ ՎՈԼՈԴՅԱՅԻ ԱԲԳԱՐՅԱՆԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՈՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով 2022 թվականի նոյեմբերի 10-ին կայացած ՀՀ տարածքում գնահատման գործունեության մասնագիտական որակավորման քննության (այսուհետ՝ Որակավորում) հայտատու Հասմիկ Վոլոդյայի Աբգարյանի որակավորման ստուգման արդյունքը բողոքարկելու վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 15-ին ներկայացված դիմում-բողոքի հիմքով հարուցված վարչական վարույթի նյութերը, ինչպես նաև հայտատու Հասմիկ Վոլոդյայի Աբգարյանի կողմից 2022 թվականի նոյեմբերի 24-ի դիմումը՝ իր կողմից 2022 թվականի նոյեմբերի 15-ին ներկայացված դիմում-բողոքն անհետևանք թողնելու մասին՝

ՊԱՐԶԵՑԻ

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի համաձայն՝ վարչական վարույթ հարուցելու հիմքերից է՝ անձի դիմումը, բողոքը:

Օրենքի 19-րդ հոդվածի և 46-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված

գործունեությունն է:Վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ:

Միաժամանակ Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն՝ դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե՝ դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից.

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի պահանջներով և հիմք ընդունելով 2022 թվականի նոյեմբերի 24-ի Հասմիկ Վոլոդյայի Աբգարյանի կողմից Կադաստրի կոմիտե ներկայացված դիմումը՝ 2022 թվականի նոյեմբերի 15-ին ներկայացված դիմում-բողոքը անհետևանք թողնելու մասին՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. 2022 թվականի նոյեմբերի 10-ի գնահատման գործունեության մասնագիտական որակավորման քննության հայտատու՝ Հասմիկ Վոլոդյայի Աբգարյանի որակավորման ստուգման արդյունքը բողոքարկելու վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 15-ին ներկայացված դիմում-բողոքով հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

14.12.2022

X

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սուրեն Թովմասյան Signed by: TOVMASYAN SUREN 1201860393